ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

19 հոկտեմբերի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

143
(2993)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՂԱԶԱՐՅԱՆԻ ՈՐԴԻՆ ՄԻՆՉ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՌԱԽՈՍԻ ՊԱՐՏՔԸ ՉԻ ԿԱՐՈՂԱՑԵԼ ՎՃԱՐԵԼ



ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանի՝ այսօր արդեն մեծահարուստ դարձած որդիները, պարզվում է, մինչ հեղափոխությունը իրենց հեռախոսի վարձավճարն անգամ չեն կարողացել վճարել:

«Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից պարզեց, որ 2016-2017 թվականներին Հովսեփ Աղազարյանը չի կարողացել «Ղ. Տելեկոմ»-ին վճարել բջջային հեռախոսի 35 հազար դրամ պարտքը:

«Ժողովուրդ» օրաթերթը պարզեց նաեւ, որ նա պարտք է եղել «Արդշինբանկ»-ին եւս՝ 122 հազար դրամ գումար: Տվյալ դեպքում Հովսեփ Աղազարյանից մեծ դժվարությամբ՝դատարանի միջոցով է հաջողվել գանձել վերոնշյալ չնչին գումարը:

Հ. Գ. Ահա թե ինչու էին կյանքի գնով իշխանափոխություն ուզում Աղազարյանները, որ օրենքի բացից օգտվելով գերշահույթներ ստանան ու անպատիժ մնան, որ համայնքներին ավտոմեքենաներ մատակարարեն առանց մրցույթի. կարճ ասած՝ դառնան նոր «շմայսներ» ու «լիսկաներ»:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ վարչապետի մամուլի խոսնակ Նազելի Բաղդասարյանը եւ Երեւանի փոխքաղաքապետ Սուրեն Գրիգորյանը հրաժարվել են արդարադատության նախարարի թեկնածու լինելուց: Նրանք չեն ուզում կառավարությունում աշխատել: Ինչպես ավելի վաղ հայտնել էինք՝ ՔՊ-ն, Արփի Դավոյանի թեկնածությունը քննարկելուց եւ նսեմացված կերպով մերժելուց հետո, ՀՀ արդարադատության նախարարի 4 թեկնածուների է դիտարկել՝ ՔՊ խմբակցության պատգամավոր Արմեն Խաչատրյան, փաստաբան Ալեքսանդր Սիրունյան, վարչապետի խոսնակ Նազելի Բաղդասարյան եւ փոխքաղաքապետ Սուրեն Գրիգորյան: Իշխանամերձ մեր աղբյուրների փոխանցմամբ՝ Նազելի Բաղդասարյանը եւ Սուրեն Գրիգորյանը հրաժարվել են իրենց թեկնածություններից՝ նշելով, որ չեն ցանկանում տեղափոխվել գործադիր: Մնացել են երկու թեկնածուներ՝ փաստաբան եւ նախկին պետավտոտեսուչ: Հավելենք նաեւ, որ ի սկզբանե Սուրեն Գրիգորյանի թեկնածությունը ՔՊ-ում բացասաբար են ընդունել, քանի որ նա անգամ խորհրդարանում չէր կարողանում ինքնադրսեւորվել, միայն «խուճուճ խոսում էր»: Այսպիսով՝ ՔՊ խմբակցության պատգամավոր Արմեն Խաչատրյանի շանսերն ավելի են մեծանում, վերջինս էլ հայտարարել է որ պատրաստ է արդարադատության նախարարի «բեռը կրել» եւ տեղափոխվել գործադիր: Տեսնենք՝ նա որքան կդիմանա Փաշինյանի կաբինետում:

Պետության բյուջեից հատկացվել է 43 մլն դրամ՝ «Սեւան ազգային պարկի» Լճաշեն-Սեւանի թերակղզի հատվածի գոտեւորման նախագծի եւ քաղաքաշինական կանոնադրության մշակման աշխատանքներն իրականացնելու համար, սակայն նախագիծը չի հաստատվել, «այն կյանքի կոչվել չի կարող, եւ այդ ուղղությամբ գումար չի ծախսվել»: 2025 թվականին նախագծի իրականացման համար կհատկացվի 43 մլն դրամի 3 անգամ ավելին՝ 121 մլն դրամ: Պատմությունը սկսենք սկզբից. 2022 թվականին փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանի գլխավորությամբ, շահագրգիռ պետական մարմինների ղեկավարների ու ներկայացուցիչների մասնակցությամբ մարտի 4-ին տեղի ունեցավ խորհրդակցություն՝ հանրային լողափերի եւ Սեւան-Լճաշեն ճեմուղու նախագծի վերաբերյալ: Հանրային լողափերի հասանելիությունը բարձրացնելու նպատակով խորհրդակցության ժամանակ քննարկվել էր մյուս հինգ լողափերը շահագործման հանձնելու, ինչպես նաեւ Լճափ, Շորժա, Նորատուս եւ Մարտունի համայնքներում եւս 4 նոր հանրային լողափեր ստեղծելու, հանրային բոլոր լողափերի համար չափորոշիչները լավարկելու հնարավորության հարցը, ինչպես նաեւ ներկայացվել էին «Սեւան ազգային պարկ»-ի Լճաշեն-Սեւանի թերակղզի հատվածի գոտեւորման նախագիծը, դրա իրականացման հետ կապված խնդիրներն ու լուծման տարբերակները: «Ժողովուրդ» օրաթերթը հարցումով դիմել էր ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ պարզելու՝ Քննարկումից հետո ի՞նչ աշխատանքներ են կատարվել տվյալ նախագծի վերաբերյալ մինչեւ 2024 թվականի հոկտեմբերի 4-ը: Արդյոք կառավարությունը ֆինանսական որեւէ միջոց հատկացրե՞լ է նախագծի կյանքի կոչման համար եւ ինչքա՞ն գումար է ծախսել: Երկու տարիների ընթացքում ի՞նչ առաջընթաց է գրանցվել հանրային լողափերը շահագործման հանձնելու մասով: Ստացանք 4 էջանոց պատասխան, որի մեջ ուշագրավն այն էր, որ նախագծի ներկայացման ընթացքում առարկություններ չեն եղել, սակայն այն ունեցել է մի շարք թերություններ: «2 հանրային լսումների շրջանակում նախագծի նկատմամբ սկզբունքային առարկություն չլինելու պարագայում՝ վերջինիս վերաբերյալ դրական արձագանք արտահայտելու նպատակով նախագծի իրագործման գործիքակազմի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության վերաբերյալ հանրության/տարածքում տնտեսվարողների պահանջին ի պատասխան՝ կատարվել են հետեւյալ աշխատանքները. 1) քանի որ տրամադրված ելակետային նյութերում բացակայում էին Սեւանա լճի շրջակա միջավայրի նախարարության «Սեւան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տվյալ հատվածում տեղակայված բոլոր գույքերի տեղադիրքերը՝ արտահայտված քարտեզների վրա, ինչպես նաեւ դրանց սեփականության ձեւերը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը մտադիր է հաստատել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման հանձնաժողովների կանոնակարգը: Հաջորդ շաբաթ՝ երկուշաբթի օրը, նախատեսված է ԱԺ արտաքին հարցերի մշտական հանձնաժողովում քննարկել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման հանձնաժողովների կանոնակարգը, որը ներկայացնելու է փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը: Այս փաստաթղթի համաձայն՝ Երեւանն ու Բաքուն համաձայնել են սահմանազատումն իրականացնել ըստ 1991 թվականի Ալմա-Աթայի հռչակագրի, բայց այդ համաձայնությունը վերջնական չէ: Կանոնակարգում նշվում է, որ գործընթացը հնարավոր է հետագայում «Խաղաղության համաձայնագրի» ընդունումից հետո, այլ սկզբունքներով ընթանա: Կանոնակարգը 7 հոդված ունի, այնտեղ հիմնականում գործընթացին վերաբերող տեխնիկական տվյալներ են, ընդհանրական ձեւակերպումներ: ԱԺ գլխադասային հանձնաժողովում հաստատվելուց հետո՝ կանոնակարգը պետք է մնի նաեւ ԱԺ լիագումար նիստերի օրակարգ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՔՊ-ում առարկություններ չունեն եւ հաստատելու են կանոնակարգը: «90%-ով հաստատելու ենք, եթե ՍԴ-ն էլ որոշում ունի, ինչո՞ւ չպետք է ընդունենք», - փոխանցեցին մեզ ՔՊ-ից: Կարճ ասած՝ Իլհամ Ալիեւի հերթական պահանջն էլ է կատարվում, իսկ Ադրբեջանում այս փաստաթղթի ընդունման գործընթացն անգամ չի մեկնարկել. իսկ միայն ՀՀ վավերացմամբ տվյալ փաստաթուղթը ոչինչ չարժե: Այն կգործի երկու կողմերի վավերացումից հետո միայն:

ԶՐՈՒՅՑ

ԱԺ-ՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾԸ ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅՈՒՆ ԷՐ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է հասարակական-քաղաքական գործիչ Էդգար Ղազարյանի հետ:

-Պարոն Ղազարյան, երեկ ԱԺ ամբիոնից նախկին պատգամավոր Ռուբիկ Հակոբյանը հայտարարություն արեց Ալեն Սիմոնյանի վերաբերյալ, ինչից հետո վերջինիս Ազգային ժողովի ՊՊԾ աշխատակիցները, ձեռքերը ոլորելով, դուրս բերեցին ԱԺ շենքից: Ի՞նչ եք կարծում, արդյոք սա՞ է ժողովրդավարության դրսեւորումը՝ ըստ այսօրվա իշխանությունների, եւ, ընդհանուր առմամբ, ինչ տվեցին երեկվա լսումները:

-Ձեր ներկայացրած միջադեպը ոչ թե ժողովրդավարության հետ կապ ունի, այլ խուլիգանության: Խուլիգանություն, որը ցուցաբերել է Ազգային ժողովի ղեկավարությունը, եւ ապօրինություն, որը ցուցաբերել է պետական պահպանության ծառայությունը: Նախ՝Ազգային ժողովում յուրաքանչյուր մարդ ինքն է որոշում, թե ինչ պիտի խոսի եւ ինքն է պատասխան տալիս իր խոսքի համար: Ոչ մեկը իրավունք չունի գրաքննություն իրականացնելու: Երբ մենք գնում ենք խորհրդարանական լսումների, ես օրինակ, չեմ մտածում, որ իմ ելույթի տեքստը նախապես պետք է համաձայնեցնեմ Ալեն Սիմոնյանի կամ Արփի Դավոյանի հետ: Ես ինքս եմ որոշում՝ ինչ պիտի խոսեմ եւ որտեղ պիտի խոսեմ: Եվ նման կերպ է մտածել նաեւ պարոն Հակոբյանը: Ընդ որում, պարոն Հակոբյանը, ոչ թե տվյալ պահին ինչ-որ ձեւակերպումներ է տվել, այլ ընդամենը մեջբերել է ԱԺ-ում ներկայումս պատգամավոր Վահագն Ալեքսանյանի երբեմն Ալեն Սիմոնյանի արտահայտած մտքերից, ինչպես նաեւ հիշել էր Ալեն Սիմոնյանի ցուցաբերած ապօրինի, խուլիգանական վարքագիծը, որը դրսեւորվել էր ՀՀ քաղաքացու հանդեպ:

Սիմոնյանը, ինչպես պարզվեց հետագայում, Չեխիայում գործուղումների էր,

ուրեմն՝ գործուղումով չի զբաղվում, նստել է այնտեղ տեսանյութերն է ԱԺ-ի նայում ու հանձնարարություն տալիս՝ մարդուն դուրս բերեն Ազգային ժողովի շենքից, որովհետեւ վիրավորել են իրեն:

Վիրավորել են՝ քաղաքացիական հասկացություն է դա, կարող է դիմել դատարան: Թեպետ ասեմ՝ Ալեն Սիմոնյանը շատ նուրբ հոգի ունի, 26 դատական հայց է ներկայացրել տարբեր լրատվամիջոցների, հասարակական-քաղաքական գործիչների, այդ թվում ձեր՝ «Ժողովուրդ» օրաթերթի դեմ, եւ երկու հայց էլ՝ իմ դեմ:

Այդքան վիրավորվել էիր՝ կգայիր Հայաստան, մեկամսյա ժամկետում հայց կներկայացնեիր եւ դատարանում կպարզվեր՝ դա վիրավորանք է, թե հաճոյախոսություն: Իսկ ՊՊԾ աշխատակիցները պետք է դատվեն, քանի որ պետական պահպանությունը պետք է տվյալ օբյեկտի անվտանգության համար աշխատի ոչ թե անձի:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

«ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆԸ». ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱԳՆ

Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հաքան Ֆիդանը հայտարարել է՝ իրենք հավատում են, որ Հայաստանի հետ պատմական եւ ֆորմալ խաղաղությունն իսկապես ճանապարհ կհարթի տարածաշրջանում անշրջելի կայունության, բարգավաճման եւ զարգացման համար: Ինչպես հաղորդում է «Արմենպրես»-ը, այս մասին հայտնում է «Անադոլու» լրատվական գործակալությունը:

Թուրքիայի արտաքին գործերի նախարարն այդ մասին ասել է՝անդրադառնալով «3+3» ձեւաչափով հանդիպմանը, որը կայանալու է հոկտեմբերի 18-ին Թուրքիայի Ստամբուլ քաղաքում:

«Հավատում ենք, որ Հայաստանի հետ պատմական եւ ֆորմալ խաղաղությունն իսկապես ճանապարհ կհարթի տարածաշրջանում անշրջելի կայունության, բարգավաճման եւ զարգացման համար»,- ասել է Ֆիդանը:

Նա ընդգծել է, որ «3+3» տարածաշրջանային խորհրդակցական հարթակի երրորդ հանդիպման քննարկումները կենտրոնացած են լինելու ոչ միայն Հայաստանի եւ Ադրբեջանի հարցերի, այլեւ ամբողջ կովկասյան տարածաշրջանի վրա:

Թուրքիայի ԱԳ նախարարը հավելել է, որ Անկարան գնահատում է «3+3» հարթակը եւ ընդգծել է, որ տարածաշրջանի երկրները պետք է միավորվեն՝ լուծելու իրենց խնդիրները:

ԿՈՆՖԼԻԿՏԻ ԽԱՂԱՂ ԼՈՒԾՈՒՄ

Պետք է այնպես անենք, որ Հրվ. Կովկասում խնդիրները լուծվեն խաղաղ ճանապարհով, ասել է Իրանի ԱԳ նախարարը, որն այսօր Թուրքիայում մասնակցելու է «3+3»-ի (ՀՀ, Ադրբեջան, Վրաստան, Իրան, Թուրքիա, ՌԴ-Խմբ.) նիստին, հայտնում է Mehr գործակալությունը:

«Բացի Վրաստանից, որը նիստին չի մասնակցելու, մյուս երկրները ցույց են տվել իրենց վճռականությունը՝ բանակցելու եւ համակարգելու ջանքերը կովկասյան տարածաշրջանի խնդիրների շուրջ: Պետք է այնպես անենք, որ քաղաքական պայմանավորվածությունները խաղաղություն եւ կայունություն բերեն տարածաշրջանին», - ասել է Արաղչին:

Ավելի վաղ հաղորդվել էր, որ այսօր Ստամբուլում Հարավային Կովկասի տարածաշրջանային համագործակցության «3+3» հարթակի (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, ՌԴ, Իրան Թուրքիա-Խմբ.) կայանալիք նիստի շրջանակում Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը կհանդիպի մասնակից երկրների ԱԳ նախարարների հետ:

Բացի այդ, Թուրքիայի ԱԳ նախարար Հաքան Ֆիդանը երկկողմ բանակցություններ կվարի իր գործընկերների հետ: Նիստի վերջում մասնակիցները համատեղ հայտարարություն կընդունեն: Դրանում շեշտը կդրվի այն բանի վրա, որ տարածաշրջանային երկրները լուծեն իրենց հարցերը երկխոսության միջոցով, ընդգծեն տարածաշրջանում քաղաքական վեճերի խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը՝ՄԱԿ-ի կանոնադրությամբ ամրագրված սկզբունքների՝ ինքնիշխանության, տարածքային ամբողջականության եւ քաղաքական անկախության, սահմանների անձեռնմխելիության, ներքին գործերին չմիջամտելու, ուժի կիրառման սպառնալիքի արգելքի եւ մարդու իրավունքների հարգման հիման վրա:

Հայտարարությունը նախատեսում է կողմերին պարտավորեցնել մեծացնել համագործակցությունը տարբեր տնտեսական ոլորտներում, մասնավորապես՝ տարածաշրջանային տրանսպորտային «միջանցքների» (չակերտները՝ Tert.am) եւ կապի հարցերում, որպեսզի երաշխավորվի, որ տարածաշրջանային տնտեսական համագործակցությունը կառուցողական դեր է խաղում վստահության ձեւավորման, բարգավաճման եւ կայունության հաստատման գործում:

ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ Է Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԿԱԼԱՆՔԻ ԺԱՄԿԵՏԸ



Բաքվի դատարանը երկարաձգել է օկուպացված Արցախի Հանրապետության նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի կալանքի ժամկետը:

Այս մասին հայտնում է «Սպուտնիկ» գործակալության ադրբեջանական ծառայությունը:

Վարդանյանը կալանքի տակ է պահվում արդեն ավելի քան 1 տարի:

ԵՐԵԿ ԱԺ-ՈՒՄ ԹԵԺ ԷՐ

Երեկ ԱԺ անվտանգության աշխատակիցներն ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի անմիջական հրահանգով բռնի ուժով խորհրդարանից հեռացրին ԱԺ նախկին պատգամավոր Ռուբեն Հակոբյանին, ով մասնակցում էր ընդդիմության նախաձեռնած լսումներին:

Բանն այն է, որ իր ելույթի ընթացքում Ռուբեն Հակոբյանն անդրադարձավ նաեւ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանին՝ կրկնելով նրա մասին նախկինում արված մի բնորոշում:

Պարզվում է՝ Ալեն Սիմոնյանը, որն այս օրերին գործուղման է, ուշիուշով հետեւել է ընդդիմության լսումներին, վրդովվել է այս հայտարարությունից եւ արտերկրից հրահանգել է հեռացնել Ռուբեն Հակոբյանին:

ԱԺ անվտանգության աշխատակիցներն էլ, հետեւելով Սիմոնյանի հրահանգին, նախկին պատգամավորի ձեռքերը ոլորած, հրմշտելով դուրս են նրան հանել խորհրդարանից:

Ավելի ուշ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, անդրադառնալով ընդդիմության խորհրդարանական լսումներին, հերթական անգամ ոչ պատշաճ բառապաշարով գրառում էր կատարել.

«Ամբողջ մի քանի ժամանոց լսումներից մնաց այն, որ մի հոգի ընկավ, Վազգեն Գալստանյանն ասաց, որ իրենք պարտվել են, պարտվել են քանիցս, բայց իր հոգին հանձնվել չգիտի եւ գնաց իր գործերով, նախկին իշխանությունների կողմից բազմիցս օգտագործված մի հին ծակ, ասենք թե «կոշիկ», մի քանի վիրավորանք հնչեցրեց, ու եթե դուրս չշպրտվեր պետական հիմնարկից՝ աղմուկ-աղաղակով, ոչ մեկ երեւի չէր էլ նկատի»:

Հետաքրքիր է, որ ժողովրդավարության ու խոսքի ազատության մասին պարբերաբար գեղեցիկ խոսքեր ձոնող Ալեն Սիմոնյանը, որը հայտնի է քաղաքացու վրա թքելու իր արատավոր բարքով, հիմա զրո հանդուրժողականություն է ցուցաբերում ազատ խոսքի նկատմամբ եւ հրահանգում է բռնի կերպով մարդուն դուրս հանել ԱԺ-ից:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԵՆ ՍՏՈՐԱԳՐԵԼ

Ուկրաինան եւ Հունաստանը անվտանգության ոլորտում համագործակցության համաձայնագիր են ստորագրել: Դա տեղի է ունեցել Բրյուսելում Եվրոպական խորհրդի գագաթնաժողովի շրջանակներում Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկու եւ Հունաստանի վարչապետ Կիրիակոս Միցոտակիսի հանդիպման ժամանակ:

Ինչպես նշում են ուկրաինական լրատվամիջոցները, Հունաստանը, մասնավորապես, կօգնի պատրաստել ուկրաինացի օդաչուներին եւ տեխնիկներին, որոնք աշխատում են F-16 կործանիչների հետ, հայտնել է Զելենսկին:

ՀԱՄԱՍ-Ի ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԿՅԱՆՔԻՑ ԶՐԿԵԼ ԵՆ

Իսրայելի բանակը պաշտոնապես հաստատել է Գազայի հատվածում ՀԱՄԱՍ-ի առաջնորդ Յահյա Սինվարի սպանությունը: Երկրի պաշտպանական գերատեսչությունից հաստատում են, որ 2024 թվականի հոկտեմբերի 16-ին մեկ տարի տեւած հետապնդումից հետո Հարավային ռազմական օկրուգի զինվորները Գազայի հատվածի հարավում գործողության ընթացքում սպանել են Յահյա Սինվարին:

Սոցցանցերում տարածվում են ՀԱՄԱՍ-ի 61-ամյա առաջնորդ Յահյա Սինվարին նման այլանդակված դիի կադրերը:

Իսրայելական ԶԼՄ-ները, հղում անելով իրենց աղբյուրներին, հայտնում են, որ այսօր նա սպանվել է ՅԱԽԱԼ-ի պարեկի կողմից Գազայի հատվածի տներից մեկում:

ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՄԵՑՈՒՄ

Եվրախորհուրդը կարծում է, որ Վրաստանի կառավարության գործողությունները հակասում են եվրոպական արժեքներին եւ սկզբունքներին, եւ, հետեւաբար, Եվրամիությանը (ԵՄ) երկրի անդամակցության գործընթացը փաստացի կանգ է առել, ինչի մասին ասվում է Բրյուսելում կայացած գագաթնաժողովի արդյունքներով խորհրդի հայտարարության մեջ:

«Եվրախորհուրդը հիշեցնում է, որ գործողությունների այս ընթացքը վտանգում է Վրաստանի եվրոպական ուղին եւ դե ֆակտո դադարեցնում է անդամակցության գործընթացը», - ասվում է հայտարարության մեջ:

Եվրոպական խորհուրդը Վրաստանին կոչ է արել ընդունել «ժողովրդավարական, համապարփակ եւ կայուն բարեփոխումներ՝ եվրոպական ինտեգրման հիմնական սկզբունքներին համապատասխան»:

Վրաստանի հարաբերություններն արեւմտյան երկրների հետ վատթարացել են այն բանից հետո, երբ մայիսին Վրաստանի խորհրդարանը հաստատել է «օտարերկրյա գործակալների» մասին օրենքը: Փաստաթուղթը ստացել է խորհրդարանականների աջակցությունը՝ չնայած երկրում զանգվածային բողոքի ցույցերին: Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին Սահմանադրական դատարանի միջոցով փորձել է կասեցնել օրենքը, սակայն դատարանը մերժել է: ԵՄ-ն քննարկում է Վրաստանի հետ առանց վիզայի ռեժիմը կասեցնելու հարցը:

ԹԱԳՈՒՀԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

ԴԱՏԱՊԱՐՏԵԼԻ Է ԱՅԴ ՁԵՎՈՎ ՇԵՆՔԻՑ ՀԵՌԱՑՆԵԼԸ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը ֆեյսբուքյան էջում գրում է.

«Դատապարտելի՛ է քաղաքացու ձեռքերը ոլորած, օրենսդիր մարմնի շենքից հեռացնելը՝ արտաբերած թեկուզ անընդունելի խոսքի համար:

Չեխիայում գտնվող Ալեն Սիմոնյանը, ըստ ամենայնի, հետեւել է այսօրվա խորհրդարանական լսումներին, որը կազմակերպել էր ընդդիմությունը ու վիրավորվել: Նրա խոսնակը հայտնել է, թե խորհրդարանական լսումների մասնակից Ռուբեն Հակոբյանը Ազգային Ժողովի շենքից դուրս է բերվել ՀՀ ԱԺ նախագահի հանդեպ թույլ տված անձնական-վիրավորական արտահայտությունների համար:

Նման պահվածքը երբեք չի հանդուրժվել, եւ չի հանդուրժվելու նաեւ ապագայում ու որեւէ դեպքում չի մնալու անարձագանք:

Իսկ ի՞նչ էր ասել ԱԺ նախկին պատգամավոր Ռուբեն Հակոբյանը: Նա հայտարարել է. «Էս ամբիոնն էսօր ղեկավարում ա մի մարդ, որից ես ամաչում ու գետինն եմ մտնում, այցեքարտով մի մարմնավաճառ, որը ժողովրդի հարկերով վարձատրվող թիկնապահների կարող է հրահանգել, որ բռնեն քաղաքացու ձեռքերից, որ ինքը թքի քաղաքացու վրա»:

Այս խոսքերից հետո ԱԺ պահպանությունն իրականացնող անձիք նախկին պատգամավորների ձեռքերը ոլորել եւ դուրս են հանել շենքից:

Սա է Նիկոլ Փաշինյանի ստեղծած ժողովրդավարությունը, այսպես՝ «զերո» հանդուրժողականությամբ են արձագանքում քաղաքական ընդդիմախոսներին, այսպես է պաշտպանվում ազատ խոսքը, որի մեջ այս դեպքում, այոԲ, կար նաեւ վիրավորանք:

Հետաքրքիր է, ԱԺ-ի՝ որպես ինստիտուտի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար նախօրեին ինչո՞ւ Ալեն Սիմոնյանը չհրահանգեց իշխանական պատգամավորի ու պետական պաշտոնյաների ձեռքերը ոլորել ու դուրս հանել:

Բայց ինձ համար առավել տարակուսելի է, որ ԱԺ փոխնախագահ Ալեն Սիմոնյանը նախկինում ավելի հանդուրժող էր իր մասին նույնատիպ խոսույթի նկատմամբ, քան այսօր: Տեսանյութով հիշեցնում եմ...

Իսկ քաղաքացու վրա թքելը կմնա հավերժ խարան Սիմոնյանի ճակատին դաջված՝ ամոթի, նվաստացման եւ լկտի անպատժելիության»:

Հիշեցնենք, որ Ազգային ժողովում, հոկտեմբերի 17-ին ընդդիմության կազմակերպած խորհրդարանական լսումների ժամանակ անվտանգության աշխատակիցները քաշքշելով ԱԺ նիստերի դահլիճից դուրս տարան Ակունք» քաղաքական վերլուծությունների կենտրոնի ղեկավար Ռուբեն Հակոբյանին:

Նրանք որեւէ պատճառաբանություն չբերեցին, միայն հայտնի դարձավ, որ դա աշխատակազմի ղեկավարի հրահանգն է եղել:

Մի պահ իրավիճակը լարվեց «Հայաստան» խմբակցության ղեկավարի աշխատասենյակի դռան մոտ, քանի որ Ռուբիկ հակոբյանն ուզում էր մտնել եւ իրերը վերցնել, սակայն նրան թույլ չտվեցին: «Այդ ստորությունն ինչի՞ եք անում, ես ձեր հերն անիծելու եմ, իմացեք»,-մատը թափ տալով ասաց Հակոբյանը:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԻՄՆԱԴՐԱՄԸ՝ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

Թաթոյան հիմնադրամը Մեծ Բրիտանիայում է. հոկտեմբերի 15-ին քննարկումներ են տեղի ունեցել Մեծ Բրիտանիայի խորհրդարանում, մասնավորապես՝

-փաստերով ներկայացվել են հայ ժողովրդի նկատմամբ Ադրբեջանի ռասիզմի եւ թշնամանքի, հայկական ինքնության ոչնչացման շարունակվող պետական քաղաքականությունը:

-Փաստեր ՀՀ ներխուժած ադրբեջանական զինված ծառայողների կողմից Հայաստան սահմանային բնակիչների իրավունքների կոպիտ խախտումների եւ շրջակա միջավայրի ոչնչացման վերաբերյալ:

-Բարձրացվել է Արցախից հայերի բռնի տեղահանման փաստերը, նրանց անվտանգ ու ապահով վերադարձի հարցը:

-Ներկայացվել է մշակութային եւ կրոնական ժառանգությունը մտադրված ոչնչացման ադրբեջանական քաղաքականությունը:

-Ադրբեջանում ապօրինի գերության մեջ գտնվող եւ պատանդ պահվող մեր հայրենակիցների հայրենիք վերադարձի բացարձակ անհրաժեշտությունը:

-Հանդիպմանը կարեւորվել է ադրբեջանական բոլոր հանցանքների համար ադրբեջանական իշխանությունների նկատմամբ պատասխանատվության արդյունավետ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը:

Լորդերի պալատում տեղի ունեցած հանդիպմանն Արման Թաթոյանը եւ Գառնիկ Քերքոնեանը մասնակցել են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մեծ Բրիտանիայի եւ Իռլանդիայի թեմի առաջնորդ Տեր Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի հրավերով:

Այդ քննարկմանը մասնակցել են նաեւ Լորդերի պալատի անդամ բարոնուհի Քերոլայն Քոքսը, ինչպես նաեւ Հայ դատի հանձնախմբի ներկայացուցիչ Անետ Մոսկոֆյանը, հոգեւոր առաջնորդներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Նույն օրը հանդիպում է եղել նաեւ համայնքների պալատում, որին մասնակցել են պատգամավորները:

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ

ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նիստում երկրորդ ընթերցմամբ քննարկվել է «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը:

Հարցը զեկուցել է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

Նրա փոխանցմամբ՝ առաջարկվող փոփոխության հիմնական նպատակը վարչարարության պարզեցումն է, ինչը բազմաթիվ քաղաքացիների համար կհեշտացնի կրթության շարունակականության ապահովումը եւ օրենքով արդեն իսկ սահմանված տարկետման իրավունքից օգտվելու գործընթացը:

Ժաննա Անդրեասյանի փոխանցմամբ՝ առաջինից երկրորդ ընթերցման ընթացքում ստացվել են որոշակի առաջարկներ, այդ թվում՝ խմբագրական բնույթի, որոնք ընդունվել են, սակայն բովանդակային առումով որեւէ այլ փոփոխություն չի կատարվել: Բոլոր այն քաղաքացիները, որոնք արդեն իսկ ունեին տարկետման իրավունք, կշարունակեն ունենալ, պարզապես Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններում հանրակրթական, ինչպես նաեւ հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայությունից տարկետումը կտրամադրվի մեկ անգամ՝ ամբողջ ուսումնառության ժամկետով: Ժաննա Անդրեասյանը վստահություն է հայտնել՝ այս փոփոխությունը կնպաստի վարչարարության կրճատմանը: Նրա խոսքով՝ շահառուների խումբը չի փոխվում, պարզապես կրճատվում է ձեռնարկվող քայլերի թիվը, որպեսզի քաղաքացիներն ամեն տարի ստիպված չլինեն դիմել տարկետման համար՝ իրականացնելով նույն գործընթացը:

Հարցն արժանացել է հանձնաժողովի դրական եզրակացությանը:

ՔՐԳՈՐԾ

ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԲՈՂՔԱՐԿՎԵԼՈՒ Է

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է փաստաբան Գուրգեն Ներսիսյանի հետ:

-Պարոն Ներսիսյան, 2023թ. հունվարի 19-ին Վարդենիսի շրջանի Ազատ գյուղում տեղի ունեցած ողբերգական դեպքի՝ 15 զինվորի կյանք խլած դեպքի առնչությամբ նախաձեռնված քրեական վարույթով մեղադրյալ, զորամասի հրամանատարի թիկունքի գծով տեղակալ Գոռ Աղեկյանը, ով Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2024 թ. օգոստոսի 23-ի որոշմամբ կալանքից ազատվել էր, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշմամբ կրկին կալանավորվել է: Ստացե՞լ եք արդյոք դատարանի որոշումը, ի՞նչ է կատարվում, ինչպես կգնահատեք այդ իրարամերժ որոշումները:

-Դատարանի որոշումը ստացել եւ ծանոթացել եմ: Հաշվի առնելով դատական համակարգի հանդեպ հարգալից լինելու պարտադիրությունը՝ զերծ կմնամ գնահատականներ հնչեցնելուց, ես ընդամենը կներկայացնեմ մի քանի փաստ, որի հիման վրա ցանկացած անձ կարող է կարծիք ձեւավորել այս հարցի կապակցությամբ իրականացված արդարադատության որակի շուրջ:

Նախ գործը քննող դատարանը Գոռ Աղեկյանին ոչ թե ազատ էր արձակել, այլ կալանք խափանման միջոցը փոխարինել էր անազատության մեջ պահելու հետ կապված՝ տնային կալանք խափանման միջոցով:

Վերջին անգամ Գոռ Աղեկյանին կալանքի տակ պահելու ժամկետը գործը քննող դատարանը երկարացրել էր մեկ ամսով, այդ որոշման դեմ դատախազությունը բերել էր հատուկ վերանայման բողոք՝ խնդրելով բեկանել այդ որոշումը եւ Գոռ Աղեկյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնել երեք ամիս ժամկետով:

Վերաքննիչ քրեական դատարանը մերժել էր բողոքը՝ անհիմն համարելով Գոռ Աղեկյանին երեք ամիս ժամկետով հետագա կալանքի տակ պահելու դատախազության պահանջը:

Գոռ Աղեկյանի նկատմամբ եռամսյա տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ գործը քննող դատարանի որոշումը նույն դատախազության կողմից բողոքարկվել է վերաքննիչ դատարան, որը, չզարմանաք, ի հակառակ նախորդ որոշման, բավարարվել է, եւ որոշում է կայացվել Գոռ Աղեկյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել երեք ամիս ժամկետով կալանքը:

-Հիմա կարող եք ինքնուրույն գնահատել իրավիճակը: Հաճախ են հնչում դատական համակարգի հանդեպ հարգանք ցուցաբերելու, դատական ակտերի հանդեպ զսպվածություն եւ հանդուրժողականություն ցուցաբերելու կոչեր, մինչդեռ, ինչպես տեսնում ենք, անգամ դատական միեւնույն ատյանում հարգանք չկա միմյանց դատական ակտերի հանդեպ: Արդարադատությունը հենց այսպես է որակազրկվում, երբ քաղաքացին հասկանում է, որ իր գործի հետ կարող են վարվել այնպես, ինչպես ուզում են կամ ինչպես տվյալ իրավիճակում նպատակահարմար է: Ցավոք ես զուսպ մարդ եմ եւ կաշկանդված եմ իմ վստահորդի զսպվածությամբ ու համբերատարությամբ, այլապես կարող էի բարձրաձայնել շատ ավելի լուրջ հարցեր, որոնք անքննարկելի կդարձնեին այս հարցով արդարադատության «անորակությունը»:

Ուզում եմ նաեւ շեշտել, որ այս գործով վերաքննիչ դատարանը լրիվությամբ անտեսել է ԱՐԴ/0152/01/19 գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի այն դիրքորոշումը, որ դատական ակտը բեկանելու համար անհրաժեշտ են որոշակի ծանրակշիռ փաստեր, որոնք թույլ կտան հավասարակշռել օրինականության եւ դատավորի անկախության, նրա ինքնուրույնության սկզբունքները: Դուք պատկերացնո՞ւմ եք, վերաքննիչ դատարանը մեկ ամսում քննարկել է մի հարց եւ բեկանել է մի դատարանի որոշում, ով նույն գործը քննում է գրեթե մեկ տարի եւ անկասկած ավելի է տիրապետում գործի վիճակին ու մեղադրյալների բնութագրականներին, քան տվյալ գործի մի քանի փաստաթուղթ ուսումնասիրած վերաքննիչ քրեական դատարանի դատավորը:

Վճռաբեկ դատարանի հիշյալ որոշումը հենց դրա մասին է, որ նման իրավիճակներում դատական ակտը բեկանելու համար վերին դատական ատյանը պետք է ունենա բավականին լուրջ ու ծանրակշիռ փաստեր ու իրավական հիմնավորումներ:

-Պարոն Ներսիսյան, պատրաստվո՞ւմ եք վերաքննիչ քրեական դատարանի որոշումը բողոքարկել:

-Անկասկած, դատարանի որոշումը բողոքարկվելու է, եւ եթե այս գործով կա արդարադատություն իրականացնելու չնչին անգամ ձգտում, ապա կարծում եմ վճռաբեկ դատարանը պետք է այն քննի ու պատասխանի պաշտպանության կողմի բարձրացրած հարցերին:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ 46-ԱՄՅԱ ԲՆԱԿԻՉԸ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

Բացահայտվել է Արարատի մարզի 34–ամյա բնակչի սպանության, վերջինիս եղբոր նկատմամբ սպանության փորձ կատարելու դեպքը:

2024թ. հոկտեմբերի 16-ին հաղորդում է ստացվել՝ Վեդի համայնքի Նոր Ուղի բնակավայրի 34-ամյա բնակչի սպանության վերաբերյալ:

ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Վեդիի քննչական բաժնում քննվող քրեական վարույթի շրջանակներում իրականացված քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել է, որ Արարատի մարզի Նոր Ուղի բնակավայրի 46-ամյա բնակիչը, նույն օրը կենցաղային հարցերի շուրջ տեղի ունեցած միջադեպի կապակցությամբ վրեժխնդիր լինելու նպատակով, հետեւել է 34-ամյա համագյուղացուն՝ դարանակալել, այնուհետեւ նրա հետեւից մտել նշված բնակավայրի Թումանյան փողոցում գտնվող տան բակ:

Գտնելով ալկոհոլի ազդեցության տակ, համագյուղացուն ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, 46-ամյա տղամարդը մոտեցել է նրան եւ նախապես իր հետ վերցրած դանակով մոտ 10 անգամ հարվածել է վերջինիս մարմնի տարբեր մասերին, այդ թվում՝ կենսական կարեւոր օրգանների՝ պատճառելով կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներ:

Տուժողի եղբայրը, նկատելով 46-ամյա տղամարդու հանցավոր գործողությունները, վազելով մոտեցել է նրան, որից հետո վերջինս, ապօրինաբար նաեւ 34-ամյա տղամարդու եղբորը կյանքից զրկելու դիտավորությամբ, հարձակվել է նրա վրա եւ դանակով հարվածել վերջինիս ուսին՝ պատճառելով մարմնական վնասվածք:

Շարունակելով իր հանցավոր մտադրությունը՝ 46-ամյա տղամարդը փորձել է նաեւ երկրորդ անգամ հարվածել տուժողի եղբորը, սակայն վերջինիս հաջողվել է մի կողմ հրել տղամարդուն եւ դիմել փախուստի, որից հետո 46-ամյա տղամարդը, սպանության սպառնալիքներ հնչեցնելով, վազել է նրա հետեւից: Լսելով սպառնալիքները՝ հարեւանությամբ բնակվող անձինք դուրս են եկել փողոց, որից հետո 46-ամյա տղամարդը անհետացել է՝ չկարողանալով ավարտին հասցնել հանցագործությունը:

Նախաքննության ընթացքում կատարվել է դեպքի վայրի զննություն, որի ընթացքում հայտնաբերվել են արնանման հետքեր, 46-ամյա տղամարդու անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է ենթադրյալ հանցագործության գործիք հանդիսացող դանակը, որի վրա առկա են եղել արնանման հետքեր: Հարցաքննվել են մի շարք անձինք, նշանակվել են դիակի դատաբժշկական եւ դատաբժշկական փորձաքննություններ:

46-ամյա տղամարդը ձերբակալվել է: Նրա նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155- րդ հոդվածի 1-ին մասով եւ 44-155-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

ՏՂԱՄԱՐԴՈՒ ՄԱՐՄԻՆ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Հոկտեմբերի 17-ին ժամը 15:49-ին Կոտայքի մարզի Բուժական գյուղի դպրոցի մոտ հայտնաբերվել է 1994 թ-ին ծնված Պ. Մ.-ի մարմինը՝ ծառից հակի թելով կախված:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ անձնավորությունը վերջերս է վերադարձել ՌԴ-ից, ամուսնացած չէր:

Իրավապահները փորձում են հանգամանքները պարզել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Ինչպես արդեն ՀՀ քննչական կոմիտեն հայտնել է, 2024թ. հոկտեմբերի 13-ին՝ ժամը 09:30-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի պահպանության տեղամասի կենտրոնացման շրջանում հայտնաբերվել էր մարտական հերթապահություն իրականացնող, նույն զորամասի զինծառայող Աղասի Սերոժի Դալլաքյանի դին՝ կզակի շրջանում հրազենային վիրավորումով:

Դեպքի առթիվ նույն օրը ՀՀ ՔԿ ՔՔԳՎ իններորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է քրեական վարույթ, որի նախաքննությունը հանձնարարվել է քննչական խմբին:

Պարզվել է, որ Ա. Դալլաքյանը մահացել է ինքնասպանություն գործելու հետեւանքով:

Ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա միջնորդություն է ներկայացվել հսկող դատախազին՝ զինվորական ծառայության մեջ ընդգրկված վերոնշյալ երկու անձանց նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ, որոնք բավարարվել են: Վերջիններս ձերբակալվել են:

Դասակի հրամանատարին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 540-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով, 522-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով, իսկ շարքային ժամկետային զինծառայողին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 540-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով, 522-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով:

Միջնորդություններ են ներկայացվել դատարան՝ նրանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ, որոնք բավարարվել են:

Նախաքննությունը շարունակվում է, անհրաժեշտ բոլոր գործողությունները կատարվում են՝ դեպքի ամբողջական հանգամանքները, հնարավոր այլ անձանց առնչությունը պարզելու ուղղությամբ:

Ծանուցում. Հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգովդատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հոկտեմբերի 17-ից 18-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 95 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՔՆՆՈՒՄ Է «ՆԱԽԿԻՆՆԵՐԻ» ԿՈՌՈՒՊՑԻԱՆ, ԻՍԿ ՔՊ–ԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՉԻ ՏԵՍՆՈՒՄ

Հոկտեմբերի 7-ին տեղեկատվական հարցում եմ ուղարկել հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանին, առաջադրելով հետեւյալ հարցերը՝

1. Հակակոռուպցիոն կոմիտեն վարույթ հարուցե՞լ է Դիլիջան համայնքում հողերի օտարման նպատակով կայացած ձեւական աճուրդների վերաբերյալ, եթե այո, այդ ուսումնասիրությունների արդյունքում ի՞նչ եք պարզել: 2. Հակառուպցիոն կոմիտեն ինչո՞ւ քննություն չի կատարում Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի, համայնքի ղեկավարի տեղակալ Արման Բազինյանի եւ վերջինիս կնոջ հարազատների, բարեկամներին համայնքապետարանում աշխատանքի տեղավորելու մասին մամուլի բազմաթիվ հրապարակումների վերաբերյալ, որպեսզի պարզի՝ արդյոք համայնքապետի եւ նրա տեղակալի հարազատ-բարեկամները իրենց կրթությամբ, մասնագիտական որակներով համապատասխանո՞ւմ են այդ պաշտոններին, նրանց կողմից պաշտոններ զբաղեցնելիս պահպանվե՞լ են օրենքի պահանջները, ընթացակարգերը, չկա՞ կոռուպցիա: 3. Դիլիջանի համայնքապետարանի գնումների մի զգալի մասը կատարվում է համայնքապետ Դավիթ Սարգսյանի եւ նրա տեղակալ Արման Բազինյանի եղբայրների անուններով գրանցված ընկերություններից: Նման գնումները կոռուպցիա են պարունակում, ինչո՞ւ դրանք չեն դառնում Ձեր ղեկավարած կոմիտեի քննության առարկա: Հակակոռուպցիոն կոմիտեի լրատվական ծառայությունը հոկտեմբերի 10-ին ուղարկել է հետեւյալ պատասխանը. «Հայտնում ենք, որ Դիլիջան համայնքի նախկին ղեկավար Արմեն Սանթրոսյանի վերաբերյալ մեկ քրեական վարույթ պաշտոնեական կեղծիք կատարելու եւ պաշտոնեական լիազորություններն անցնելու հոդվածներով (ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետ եւ երկու դրվագ՝ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մաս)ուղարկվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարան, մեկ վարույթ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով կարճվել է, իսկ պաշտոնական դիրքի չարաշահման եւ պաշտոնական կեղծիք կատարելու (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մաս եւ 314-րդ հոդվածի 1-ին մաս) առերեւույթ դեպքերի առթիվ նախաձեռնված մեկ այլ վարույթով իրականացվում է նախաքննություն: Քրեական վարույթների վերաբերյալ այլ տեղեկություն չենք կարող տրամադրել: Ինչ վերաբերում է հարցման մեջ նշված մյուս կետերին, ապա Ձեր նշած հանգամանքները կենթարկվեն ստուգման եւ քրեական վարույթ նախաձեռնելու հիմքերի առկայության դեպքում կկայացվի համապատասխան որոշում»: 2005-2021թթ. Դիլիջան համայնքապետ Արմեն Սանթրոսյանի վերաբերյալ հակակոռուպցիոն կոմիտեն վարույթներ է քննում, իսկ 2021թ. փետրվարի 26-ից Դիլիջանը համայնքը ղեկավարող, ՔՊ կուսակցության Դիլիիջանի կառույցի ղեկավար Դավիթ Սարգսյանի գործունեության մեջ հակակոռուպցիոն կոմիտեն անցած երեքուկես տարում կոռուպցիա չի տեսել ու չի քննել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ԻՆՉՆ Է ՆԱԽԱՏԵՍՈՒՄ ԹՎԱՅՆԱՑՆԵԼ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերի 17-ի Կառավարության հերթական նիստում քննարկվել եւ հավանության են արժանացել «ՀՀ քաղաքացիության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը:

Օրինագծերի ընդունման արդյունքում նախատեսվում է՝

• թվայնացնել քաղաքացիություն ստանալու եւ քաղաքացիությունը դադարեցնելու գործընթացներում մատուցվող ծառայությունները,

• ապահովել վարույթի էլեկտրոնային եղանակով իրականացումը, ինչի արդյունքում էականորեն կբարելավվի քաղաքացիության շնորհման եւ դադարեցման գործընթացների արդյունավետությունը,

• խնայել ֆինանսական եւ մարդկային ռեսուրսներ,

• բարելավել մատուցվող ծառայությունների որակը,

• փոփոխել քաղաքացիություն ստանալու եւ քաղաքացիությունը դադարեցնելու գործերի քննության համար պետական տուրքի չափերը:

Նախագծերով առաջարկվում է նաեւ՝

• սահմանել քաղաքացիություն ստանալու եւ քաղաքացիությունը դադարեցնելու համար դիմելու էլեկտրոնային ընթացակարգ,

• ստեղծել փաստաթղթերը նախապես էլեկտրոնային ներկայացնելու հնարավորություն, որի դեպքում իրավասու մարմինը ստուգելու է դրանց ամբողջականությունը, բացառելու է դիմումատուի ՀՀ քաղաքացի հանդիսանալու հանգամանքը, ինչից հետո միայն դիմումատուն հնարավորություն է ստանալու հերթագրվել եւ փաստաթղթերն անձամբ ներկայացնել լիազոր մարմին կամ օտարերկրյա պետությունում գործող համապատասխան դեսպանություն կամ հյուպատոսական հիմնարկ,

• էլեկտրոնային հայտի նախնական ուսումնասիրության փուլում փաստաթղթերի ամբողջականությունն ապահովված չլինելու դեպքում դրանք համալրելու 15-օրյա ժամկետ, իսկ ամբողջականությունը նշված ժամկետում չապահովելու դեպքում դիմումի ընթացքի դադարեցում՝ օրենքով սահմանված կարգով՝ կրկին հայտ ներկայացնելու հնարավորություն,

• հնարավորություն է ընձեռնվելու քաղաքացիություն հայցող կամ քաղաքացիությունը դադարեցնել ցանկացող անձի վերաբերյալ բոլոր հարցումները համապատասխան այլ մարմիններին՝ Պետական եկամուտների կոմիտե, Պաշտպանության նախարարություն, Ոստիկանություն, Ազգային անվտանգության ծառայություն եւ այլն, իրականացնել նախապես՝էլեկտրոնային եղանակով, ուստի դիմումատուն կարողանալու է մինչեւ դիմումի հանձնելը տեղում տեսնել իր վերաբերյալ պարտավորությունների առկայությունը, մարել դրանք եւ նոր ներկայացնել փաստաթղթերը:

Սա ոչ միայն արագացնելու է քաղաքացիության գործերի քննության հնարավորությունը, այլ նաեւ պարզեցնելու է գործընթացը:

Գործող օրենքը սահմանում է՝ եթե ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելուց հետո 5 տարվա ընթացքում պարզվի, որ անձը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր կամ առկա են քաղաքացիությունից դուրս գալու մասին դիմումը մերժելու օրենքով նախատեսված հիմքեր, ապա լիազոր մարմինը նախաձեռնում է անձի՝ ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ Նախագահի հրամանագիրն ուժը կորցրած ճանաչելու գործընթաց, ինչի մասին անձը ծանուցվում է օրենքով սահմանված կարգով: Ներկայացվող օրինագծով նախատեսվում է հինգ տարի ժամկետը փոխարինել տասը տարի ժամկետով, քանի որ գործնականում բազմաթիվ են դեպքերը, երբ կեղծ փաստաթղթեր ներկայացնելու փաստը պարզվում է անձնագրի փոխանակման ժամանակ (անձնագիրը տրվում է 10 տարի ժամկետով) եւ 5 տարվա վաղեմության ժամկետն անցած լինելու փաստով պայմանավորված՝ անհնար է լինում քաղաքացիությունը դադարեցնելու գործընթաց սկսելը:

Միաժամանակ, «Պետական տուրքի մասին» օրենքում առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է բարձրացնել քաղաքացիություն ստանալու եւ քաղաքացիությունը դադարեցնելու համար նախատեսված պետական տուրքը եւ սահմանել համապատասխանաբար՝ 50 000 եւ 150 000 դրամ՝ 1000 դրամի եւ 25 000 դրամի փոխարեն:

Ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանն առաջարկել է պետական տուրքի վերանայման կարգավորումը չտարածել փախստականների, այդ թվում՝ ԼՂ-ից բռնի տեղահանված եւ ժամանակավոր պաշտպանության տակ գտնվող անձանց նկատմամբ, ինչպես նաեւ փախստականներին ազատել քաղաքացիության շնորհման դիմելու տուրքի վճարման պահանջից:

ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ՝ «ԱՐԹԿՈՍՄԵԴ»-ՈՒՄ

Կառավարության նիստից հետո Անահիտ Ավանեսյանը հայտարարեց, որ «Արթկոսմեդ»-ում տեսչական մարմինը ստուգումներ է իրականացնում:

Նախարարը նշեց, որ Նախարարությունը բժշկական հաստատություններում կամ էսթետիկ վիրաբուժության կլինիկաների լիցենզավորման ոլորտում գնում է ավելի խիստ պահանջների: Եվ սա այն բանից հետո, երբ «Արթկոսմեդում» արդեն 2-րդ մահվան դեպքով վիրահատությունն է գրանցվում:

Անդրադառնալով նաեւ վերջերս «Արթկոսմեդ» էսթետիկ վիրաբուժության կլինիկայում վիրահատության ընթացքում գրանցված մահվան երկրորդ դեպքին՝ նախարարը մանրամասնեց.

«Խախտումների եւ այլնի վերաբերյալ վերահսկողությունը իրականացնում է առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմինը, այս պահին էլ որոշակի ստուգումներ է իրականացնում: Եթե ստուգման արդյունքում հայտնաբերվեն լիցենզիայի պայմանների որեւէ խախտում, ապա տեսչականը կդիմի մեզ, մենք էլ լիցենզիան կդադարեցնենք կամ կսառեցնենք»:

Հիշեցնենք, որ «Արթկոսմեդ» էսթետիկ վիրաբուժության կլինիկայում հոկտեմբերի 5-ին գրանցվել էր 56-ամյա կնոջ մահվան դեպք: Մահացողը 56-ամյա Ջաբել Կարապետյանն էր, որը Գերմանիայից էր եկել Հայաստան, դիմել պլաստիկ վիրահատության համար: Սովորաբար, բժշկական կենտրոնը պետք է պատշաճ վերակենդանացման բաժանմունք ունենա, որ հավանական խնդիրների դեպքում անմիջապես կարողանա կայունացնել պացիենտի վիճակի վատթարացումը, «Արթկոսմեդ»-ում բուժառուի վիճակի վատթարացումից հետո, ծայրահեղ ծանր վիճակում տեղափոխել են «Աստղիկ» ԲԿ:

Սա կլինիկայում գրանցված արդեն երկրորդ մահվան դեպքն է պլաստիկ վիրահատության ընթացքում: Կլինիկայում գրանցված մահվան առաջին դեպքում քրեական վարույթը նախաձեռնվել էր 2023թ. հոկտեմբերի 20-ին:

Ստացվում է, որ մահվան դեպքերի պարբերականությունը խիստ առնչություն ունի տեսչական մարմի կողմից ստուգումներ իրականացնելու հարցում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 18 պատահար. 2 մարդ զոհվել է, 18-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԸՆԹԱՑԻԿ

ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐՈՎ՝ 100–130 ԳԼՈՒԽ ՄԱՅՐԱՑՈՒ ՈՉԽԱՐ Է ՏՈՒԺԵԼ

«Նախնական հաշվարկներով՝ 100-130 գլուխ մայրացու ոչխար է տուժել»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասել է Վարդենիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Կարեն Մկրտչյանը:

Հոկտեմբերի 17-ին՝ առավոտյան ժամը 06:30-ի սահմաններում, Վարդենիս խոշորացված համայնքի Շատվան բնակավայրի բնակիչ Մանվել Հակոբյանը, մտնելով իրենց պատկանող անասնագոմ, հայտնաբերում է իրեն պատկանող մոտ 100-ից ավելի մայրացու ոչխարներին եւ գառներին՝ սատկած:

Ինչպես տեղից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը իր հետ զրույցում Մ. Հակոբյանն ասում էր.

«Սովորության համաձայն ամեն առավոտ էս ժամին մտնում եմ գոմ, որպեսզի զբաղվեմ գառների խնամքով՝ արածեցնել, կեր տալ, ու, ճիշտն ասած, մտքովս չէր անցնի, որ հնարավոր է՝ գայլերի կողմից նման սպանդ իրականացվեր: Սա 1 կամ 2 գայլի բան չի, վարկ ենք վերցրել ու զբաղվում էինք էս գործով ու հիմա չգիտենք՝ ում դիմենք: 200-ից ավելի մայրացու ոչխարներ ու գառներ կան, 100-ից ավելիին հոշոտել են, մի քանիսն էլ վիրավոր են. էդ վիրավորները հաստատ չեն ապրի: Երեւի նման բան անգամ երազում չէի տեսնի: Ուզում եմ հավատալ, որ Գեղարքունիքի մարզպետարանը, ինչի չէ՝ նաեւ Կառավարությունը օգնության ձեռք կմեկնեն. մեր ընտանիքի ապրուստի միջոցն էր սա, չհաշված հազիվ ծերը ծերին հասցնում, վարկերն էինք փակում. հիմա բանկը գոնե մի 2 տարով վարկերը սառեցնեն, մինչեւ տեսնեմ՝ գլխիս ինչ է գալիս»:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Վարդենիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալի Կարեն Մկրտչյանի հետ: Նրա խոսքով հանձնաժողով է ստեղծվել, որը Ներքին գործերի փրկարար ծառայության հետ միասին հաշվարկում է քաղաքացուն հասցրած վնասը:

Ավելի ուշ պարզ կդառնա, թե հստակ քանի մայրացու ոչխար է հոշոտվել եւ մոտավոր որքան ՀՀ դրամ է կազմում տուժը: Նախնական հաշվարկներով՝ 100-130 գլուխ մայրացու ոչխար է տուժել:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ»-Ը ԴԱՐՁԵԼ Է «ԱՆՊԱՏԺԵԼԻ»

ՈՎ Է ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՐԱԾ ՎՆԱՍԸ

Հոկտեմբերի 16-ին «Վեոլիա Ջուր» ընկերությունը հանդես եկավ հերթական խայտառակ հայտարարությամբ, ըստ որի 36 ժամ ջուր չի լինելու Երեւանի տարբեր վարչական շրջաններում եւ երեք մարզերում: Ընկերությունը մի մեծ ցանկ է հրապարակել, ըստ որի Վթարային ջրանջատումներ կլինեն Երեւանում, Armավիրի, Արարատի եւ Կոտայքի մարզերում հոկտեմբերի 16-ի առավոտվանից սկսած:

Եվ այսպես, «Վեոլիա Ջուր» ընկերությունը տեղեկացրել է իր հաճախորդներին եւ սպառողներին, որ «Արզական-Երեւան» ջրատարի վրա վթարի վերացման աշխատանքներով պայմանավորված, ս.թ. հոկտեմբերի 16-ին ժամը 10.00-ից մինչեւ հոկտեմբերի 17-ը ժամը 22.00-ն կդադարեցվի հետեւյալ տարածքների ջրամատակարարումը.

Երեւանի Արաբկիր վարչական շրջանի յոթ տասնյակի հասնող հասցեներում, Երեւանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի՝Արարատյան 1, 2 զանգվածների՝ իրենց նրբանցքներով, Կուրղինյան եւ Մեծարենցի փողոցների՝ իրենց նրբանցքներով, Իսակովի պողոտայի, Անդրանիկի թաղաղամասերով ու կրկին յոթ տասնյակը անցնող թաղամասով:

Երեւանի Կենտրոն վարչական շրջանի՝ «Կիլիկիա» գարեջրի գործարանի, Armավիրի մարզի՝ Թաիրով, Փարաքար գյուղերի եւ հանրային բաժանորդների, Արարատի մարզի՝Արգավանդ, Գեղանիստ, Խաչփառ, Ազատաշեն գյուղերի եւ հանրային բաժանորդների,

Կոտայքի մարզի՝ Եղվարդ եւ Նոր Հաճն քաղաքների, Ջովունի, Քանաքեռավան, Պտղնի, Մրգաշեն, Նոր Արտամետ, Նոր Գեղի, Բանավան, Գետամեջ գյուղերի, Առինջ գյուղի վերին հատվածի, Արգել գյուղի ամառանոցների հատվածներում:

Նշված, բոլոր տեղերի բնակիչները 36 ժամ զրկված են խմելու ջրից:

Գաղտնիք չէ, որ այս ընկերությունը «աչքի է ընկնում» իր բարձիթողի աշխատանքով, գրեթե պետական բոլոր կառույցների հետ խնդիր ունի, քանի որ երբ հերթը հասնում է այս ընկերության աշխատանքին, միշտ «գործը գցում» են այլ կազմակերպության վրա ու համարում խնդիրը լուծված:

Այսքանը քիչ չէ, հիմա էլ սովորություն են դարձրել մարդկանց զրկել ամենօրյա ջրից: Ու ստիպված բնակիչները խանութներից ջրեր են գնում՝ ֆինասական կորուսներ ունենում, հայտնվում իսկական «խոլերիայի» մեջ, բայց դրա համար որեւէ մեկը պատասխանատվություն չի կրում կամ փոխհատուցում բնակիչներին: Դրան զուգահեռ, վերը նշված վարչական շրջաններում, տարբեր պետական հաստատություններ, մասնավոր ընկերություններ, կրթական հաստատություններ չեն գործում, քանի որ «Վեոլիա» ջուր ընկերությունը որոշել է 36 ժամ վթար վերականգնել: Թե այդ ինչ վթարներ են այդքան վերականգնում, ոչ ոքի հայտնի չէ, այն պարագայում, երբ չկա մեկ օր, որ Երեւանում կամ մարզում վթար չլինի:

Իսկ, թե ինչու է լռում հայրենի կառավարությունը, ինչու է այս ընկերությունը արտոնյալ, մարդկանց իրավունքներ ոտնահարում, բոլորի համար մնում է անհայտ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը «Մասնագետների պատրաստման բուհ-մասնավոր հատված համագործակցություն» ծրագրի շրջանակում հայտարարում է «Կարողությունների զարգացում» բաղադրիչի մեկնարկի մասին:

Տեխնոլոգիական ընկերությունների աշխատակիցների վերապատրաստման համար հայտարարված դրամաշնորհային մրցույթի արդյունքում ստացվել է 38 հայտ, ընտրվել է 23-ը: Հաղթող ընկերությունների շուրջ 300 աշխատակիցներ տարբեր ուսումնական հաստատություններում կանցնեն ոլորտային վերապատրաստման ծրագրեր:

2024 թվականի օգոստոսի 7-ին 6 ընկերության հետ կնքվել են դրամաշնորհի տրամադրման պայմանագրերը: Հոկտեմբերի 17-ին 2- րդ անգամ հայտարարված մրցույթի արդյունքում կնքվել է եւս 17 պայմանագիր:

Հաղթող կազմակերպությունները՝ մինչեւ ծրագրի ավարտը, որպես հաջողության չափանիշ պետք է ներկայացնեն առնվազն մեկ ավարտական աշխատանք:

Ծրագրի ավարտը նախատեսված է 2024 թվականի դեկտեմբերին:

«Կարողությունների զարգացում» բաղադրիչով նախատեսվում է օժանդակել SS եւ ինժեներական կազմակերպությունների կադրային ռեսուրսների բարելավմանը՝ կադրերի վերապատրաստման լավագույն ծրագրերին տրամադրելովով դրամաշնորհներ (վաուչերներ):

ՈՒՇԱԳՐԱՎ ԹՎԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթը վիճակագրական կոմիտեից տեղեկացավ Երեւան քաղաքի բազմաբնակարան շենքերի բնակարանների շուկայական միջին գները՝ ըստ վարչական շրջանների եւ գոտիների:

2024 թվականի հուլիս ամսին Կենտրոն վարչական շրջանում բնակարանի 1 քառակուսի մետր մակերեսն արժեցել է 900.000 ՀՀ դրամ, իսկ նույն թվականի հաջորդ ամսին թանկացել է 3050 դրամով:

Արաբկիր վարչական շրջանում բնակարանի 1 քառակուսի մետր մակերեսը 2024 թվականի հուլիս ամսին արժեցել է 628.500 դրամ, իսկ նույն թվականի օգոստոս ամսին՝ 631.700 դրամ:

2024 թվականին Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում բնակարանի 1 քառակուսի մետր մակերեսն արժեցել է 438.500 դրամ, իսկ օգոստոս ամսին՝440.500 դրամ:

Նոր Նորք վարչական շրջանում 2024 թվականի հուլիս ամսին բնակարանի 1 քառակուսի մետր մակերեսի գինն արժեցել է 398.000 դրամ, իսկ օգոստոս ամսին՝400.300 դրամ:

Ավան վարչական շրջանում հուլիս ամսին բնակարանի 1 քառակուսի մետր մակերեսն արժեցել է 398.000 դրամ, իսկ օգոստոսին՝399.700 դրամ:

2024 թվականի հուլիս ամսին բնակարանի 1 քառակուսի մետր մակերեսը Էրեբունի վարչական շրջանում արժեցել է 407.000 ՀՀ դրամ, իսկ նույն թվականի օգոստոս ամսին՝ 408.100 դրամ:

Շենգավիթ վարչական շրջանում 2024 թվականի հուլիս ամսին բնակարանի 1 քառակուսի մետր մակերեսն արժեցել է 400.000 դրամ, իսկ օգոստոսին՝ 400.800 դրամ:

Դավթաշեն վարչական շրջանում սույն թվականի հուլիս ամսին բնակարանի 1 քառակուսի մետր մակերեսն արժեցել է 476.000 դրամ, իսկ օգոստոս ամսին՝478.900 դրամ:

2024 թվականին Աջափնյակ վարչական շրջանում բնակարանի 1 քառակուսի մետր մակերեսն արժեցել է 412.000 ՀՀ դրամ, իսկ նույն թվականի օգոստոս ամսին՝410.000 ՀՀ դրամ: Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում 2024 թվականի հուլիս ամսին բնակարանի 1 քառակուսի մետր մակերեսն արժեցել է 390.200 դրամ, իսկ օգոստոս ամսին՝391.000 դրամ:

Նուբարաշեն վարչական շրջանում 2024 թվականի հուլիս ամսին բանակարանի 1 քառակուսի մետր մակերեսն արժեցել է 229.050 դրամ, իսկ նույն թվականի օգոստոս ամսին՝ 230.200 դրամ: Ուսումնասիրելով վիճակագրությունը՝ կարելի է նկատել, որ 1 ամսվա կտրվածքով բնակարանների 1 քառակուսի մետր մակերեսի գինը աճել է:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅ-ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՑԵՐ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանն ընդունել է Հունգարիայի Հայ ինքնավարության նախագահ, դոկտոր Իշտվան Ցարանի գլխավորած պատվիրակությանը, որի կազմում էին Հունգարիայի խորհրդարանում Հայ ինքնավարության խոսնակ Նիկողոս Ակոպյանը, Բուդապեշտի եւ այլ տեղական ինքնակառավարման մարմիններում Հայ ինքնավարության ներկայացուցիչները:

Հանդիպմանը ներկա է եղել նաեւ Հունգարիայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը:

Կողմերը քննարկել են մշակույթի ոլորտում համագործակցությունը զարգացնելու հնարավոր ուղիներն ու նախանշել դրանց իրականացման ճեւաչափերը:

Նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը ողջունել է հյուրերին ՀՀ ԿԳՄՍ նախարարությունում եւ կարեւորել երկկողմ համագործակցության ընդլայնման պատրաստակամությունը՝ շեշտելով հայկական համայնքի դերակատարումը Հունգարիայում հայկական մշակույթի տարածման եւ ճանաչելի դարձնելու գործում:

Հունգարիայի խորհրդարանում Հայ ինքնավարության խոսնակ Նիկողոս Ակոպյանը ներկայացրել է Հունգարիայում հայկական համայնքի գործունեությունը, որի շրջանակում իրականացվում են ծրագրեր՝ միտված հայկական մշակույթի պահպանությանն ու հայապահպանությանը: Նրա տեղեկացմամբ՝ աշխատանքներ են տարվում հայկական հուշարձանների պահպանության, տոների նշման միջոցով հայ մշակույթի ներկայացման, ինչպես նաեւ «Ուրարտու» թատրոնի գործունեության զարգացման ուղղությամբ:

Կողմերն անդրադարձել են նաեւ Հայաստանի պետական ջազ նվագախմբի վերջին հյուրախաղերին, որի շրջանակում Հունգարիայի արվեստասեր հանրությանը ներկայացվել է JAZZNAVOUR ծրագիրը՝ նվիրված Շառլ Ազնավուրի 100-ամյակին:

Նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը կարեւորել է համագործակցության խորացմանն ուղղված քայլերը եւ առաջարկել փոխգործակցության լայն շրջանակ՝ երաժշտարվեստի, պարարվեստի, կինոյի, թատրոնի, մշակութային կրթության ոլորտներում:

Երկու երկրների մշակույթների տարածման եւ հանրահռչակման համատեքստում քննարկվել են մշակույթի օրերի անցկացման հնարավորությունները Հայաստանում եւ Հունգարիայում, ինչպես նաեւ կրթամշակութային ծրագրերի իրականացման նպատակով՝ երաժշտական եւ արվեստի դպրոցների միջեւ փոխգործակցությունը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՃԱՄԲԱՐԱԿՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ԿՍՏԵՂԾՎԻ

Կառավարությունն ընդունել է «Գույք նվիրաբերելու մասին» որոշում, որով նախատեսվում է Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքի Տիգրան Մեծ փողոց 17/1 հասցեում գտնվող փորձարարական կենտրոնի շենքը, ինչպես նաեւ դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար հատկացված հողամասը նվիրաբերել Ճամբարակ համայնքին՝ այն վերանորոգելու եւ որպես մշակութային կենտրոն շահագործելու նպատակով:

Հիմնավորման համաձայն՝ սահմանամերձ Ճամբարակը համայնքը չունի մշակույթի կենտրոն, որը սկզբնական շրջանում կծառայի որպես ազգային նվագարանների դասավանդման կենտրոն, հետագայում ընդլայնելով գործունեությունը, կիրականացնի մշակութային բազմաբովանդակ միջոցառումներ:

Մշակութային կենտրոնը ֆինանսավորվելու է համայնքային բյուջեից, ինչը կլուծի երեխաների արտադպրոցական կրթության կազմակերպումը, ինչպես նաեւ կստեղծի լրացուցիչ աշխատատեղեր:

Համայնքը նախատեսում է գույքի նվիրաբերությունը ստանալուց հետո 5 տարվա ընթացքում իրականացնել 15 մլն դրամի ներդրում՝ ընթացիկ վերանորոգման եւ գույքի պահպանության համար եւ 90 մլն դրամի ներդրում՝ մշակութային կենտրոնի ընթացիկ գործունեությունն ապահովելու համար:

ԿՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ ԻՐԵՆՑ ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Երեւանում կանցկացվի «Ընդհանուր լեզու գտնել» կարգախոսով նախագիծը: Այն տեղի կունենա հոկտեմբերի 25-26-ը: «Ընդհանուր լեզու գտնել» նախագիծն իրականացնում գերմանական High Art Bureau ընկերությունը՝ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ:

Փառատոնի շրջանակում հոկտեմբերի 26-ին, ժամը 17:00 Երեւանի Փոքր թատրոնում կկայանա ներկայացման պրեմիերա, որը ստեղծել են 30 երիտասարդներ Հայաստանից, Լեռնային Ղարաբաղից, Վրաստանից, Ուկրաինայից եւ Ռուսաստանից: 10 օրվա ընթացքում նրանք աշխատել են միջազգային պարուսույցների եւ երաժիշտների հետ՝ գտնելու ընդհանուր լեզու, որը գերազանցում է մշակույթի, ծագման, լեզվի, սեռի եւ հաշմանդամության տարբերությունները:

Կատարողների միջազգային թիմում են Ուփսալայի կրկեսի տնօրեն Լարիսա Աֆանասեւան, Dobranoch խմբի երաժիշտ Իլյա Գինդինը, Drum Theatre նվագախմբի հիմնադիր Դենիս Վեդմեցկին, դուդուկահար Արտակ Խաչատրյանը, մուլտի ինստրումենտալիստ եւ կոմպոզիտոր Դիմիտրի Լեկվեիշվիլին, պարուսույց եւ մոդել Ալիկա Պաեսկեն, պարուհի, ժամանակակից խորեոգրաֆիայի լաբորատորիայի հիմնադիր Հասմիկ Թանգյանը:

Բացի այդ, կանցկացվի «Դեպի հավասարություն. մշակույթը եւ կրթությունը երկխոսության մեջ» քննարկման նախագիծ, որը նպատակ ունի հաղթահարել հասանելիության մարտահրավերները Հայաստանի մշակութային եւ կրթական ոլորտներում՝ երկխոսության եւ Գերմանիայի եւ Հայաստանի փորձագետների միջեւ փորձի փոխանակման միջոցով:

Այն կկայանա հոկտեմբերի 25-ին: Թեման է՝ մշակույթի եւ կրթության մեջ մատչելիությունը եւ ներառականությունը: Միջոցառմանը մասնակիցները կծանոթանան Գերմանիայի լավագույն փորձի օրինակներին, կմասնակցեն հայտնի փորձագետների հետ քննարկումներին եւ լուծումներ կմշակեն իրենց կազմակերպության համար:

Քննարկումը կվարեն փորձագետներ դոկտոր Քրիստիանե Շրյուբերսը, որը թանգարանային ոլորտի փորձագետ է եւ մշակութային հաստատություններում եւ թանգարաններում ներառման եւ մատչելիության հարցերով խորհրդատու է, եւ դոկտոր Քեյթ Բրեհմենը՝ համադրող եւ արվեստի մանկավարժ:

Ամբողջ միջոցառումը թարգմանվելու է հայերեն: Այս ծրագիրն իրականացվում է Հայաստանում Գերմանիայի դեսպանատան եւ Երեւանի Գյոթե կենտրոնի աջակցությամբ:

ՄԱՐԶԱԿԱՆ

«ՇԻՐԱԿ»-Ը ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ՀԱՂԹԵՑ «ՎԵՍՏ ԱՐՄԵՆԻԱ»-ԻՆ

Հայաստանի ֆուտբոլի առաջնության՝ Պրեմիեր լիգայի 11-րդ տուրի շրջանակներում կայացավ «Շիրակ»-«Վեստ Արմենիա» հանդիպումը:

Գյումրու քաղաքային մարզադաշտում տեղատարափ անձրեւի ներքո կայացած խաղում գրանցվեց երկու դարպասի գրավում: «Շիրակ»-ի կազմում աչքի ընկան Մինասյանը եւ Կոդիան:

«Շիրակ»-«Վեստ Արմենիա»՝2:0:

Հայաստանի առաջնությունում այս տուրի շրջանակներում կկայանան նաեւ «Արարատ-Արմենիա»-«Արարատ», «Գանձասար»-ԲԿՄԱ խաղերը:

ԷԼԻԴԱ ՔՈՉԱՐՅԱՆԸ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ Մ22 ԵԱ ԵԶՐԱՓԱԿՉՈՒՄ Է

Էլիդա Քոչարյանը երկրորդ տարին անընդմեջ մինչեւ 22 տարեկանների Եվրոպայի առաջնության եզրափակչում է ու կփորձի պաշտպանել տիտղոսը:

Կիսաեզրափակչում հայ մարզուհին մրցել է լատվիացի Աննա Սորոկինայի հետ ու բոլոր ռաունդներում ունենալով մեծ առավելություն՝ հաղթել 5:0 հաշվով:

Ոսկե մեդալը Էլիդան կվիճարկի Ուկրաինայի ներկայացուցիչ Տատիանա Դովգալի հետ:

«ՆՈԱ-2»-Ի ԳԼԽԱՎՈՐ ՄԱՐԶԻՉԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՄԱՐԶԵԼ Է ՌՈՆԱԼԴՈՒԻՆ

Ձայնագրությունը գեներացված է Armenian Text to Speech արհեստական բանականության միջոցով, որն այս պահին գտնվում է թեստավորման փուլում

Երեւանի «Նոան» ներկայացրել է երկրորդ թիմի գլխավոր մարզիչ Պաուլո Լեիտաոյին:

Պորտուգալացի մասնագետն ունի ավելի քան 45 տարվա աշխատանքային փորձ տարբեր երկրներում: Լիսաբոնի «Սպորտինգում» 18 տարվա աշխատանքի ընթացքում նա մարզել է այնպիսի ֆուտբոլիստների, ինչպիսիք են Կրիշտիանու Ռոնալդուն, Լուիշ Ֆիգուն, Ռիկարդու Կուարեժման, Սիմաու Սաբրոզան եւ մյուսները: Նա նաեւ աշխատել է Պորտուգալիայի 1-ին, 2-րդ եւ 3-րդ լիգաներում, նաեւ այլ արտասահմանյան ակումբներում:

Լեիտաոն նաեւ տարբեր ակումբներում զբաղեցրել է տեխնիկական տնօրենի պաշտոն:

● Հոկտեմբերի 21-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Art փսիխոզ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2.000-8.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ ինչ արտոնություններ ունեն հաշմանդամները:

Սիրան Պողոսյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ հաշմանդամություն ունեցող անձինք՝

Ի ընդգրկված են բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում եւ կարող են օգտվել սահմանված անվճար եւ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալու արտոնություններից,

Ի ընդգրկված են անվճար եւ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի ցանկում: 1-ին եւ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք իրավունք ունեն օգտվել անվճար դեղեր ձեռք բերելու արտոնությունից, իսկ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք՝ 50% զեղչով, եթե չեն օգտվում ավելի արտոնյալ պայմաններով դեղորայք ստանալու իրավունքից,

- ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած 1-ին եւ 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող եւ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող անձինք ընդունվում են պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգ՝ վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում,
- 1-ին եւ 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձինք ունեն անվճար էլեկտրատրանսպորտից օգտվելու իրավունք,
- իրավունք ունեն ստանալու աջակցող միջոցներ՝ պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, վերականգնման տեխնիկական եւ այլ օժանդակ միջոցներ՝ համապատասխան վերականգնողական անհատական ծրագրին, պետական հավաստագրի հիման վրա:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հաշմանդամությունը սահմանվում է մեկ տարի ժամկետով, երկու տարի ժամկետով, մինչեւ 18 տարին լրանալը եւ անժամկետ:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչ չափանիշներ են հաշվի առնվում վարկ տրամադրելիս: Արդյոք այդ չափանիշների առկայության դեպքում բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը պարտավո՞ր է դիմողի հետ կնքել վարկային պայմանագիր:

Համլետ Հարությունյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ վարկային պայմանագիրը չի հանդիսանում հրապարակային պայմանագիր, հետեւաբար վարկատուն ինքն է ազատորեն որոշում՝ ում հետ կնքել վարկային պայմանագիր, ում հետ՝ ոչ: Բանկը կամ այլ վարկային կազմակերպություն, գնահատելով վարկը մարելու հաճախորդի հնարավորությունը, ինքն է որոշում՝ կնքել վարկային պայմանագիր, թե ոչ:

Վարկունակությունը գնահատելու նպատակով կարող են հաշվի առնվել հետեւյալ հանգամանքները՝

աշխատավարձի եւ այլ եկամուտների առկայությունը,
վարկային պատմությունը,
անշարժ եւ այլ գույքի առկայությունը,
երաշխավորների առկայությունը,
տարիքը,
այլ հանգամանքներ:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Վարկային բյուրոն չպետք է ներառի վարկային զեկույցում վարկային տեղեկատվության սուբյեկտի վերաբերյալ վարկային զեկույցի տրամադրման պահին նախորդող հինգ տարուց ավելի վարկային տեղեկատվություն: Հինգ տարին ավարտվելուց հետո նշված տեղեկատվությունը արխիվացվում է («Վարկային տեղեկատվության շրջանառության եվ վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետ):

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի ազգային գրադարանը երեկ ձեռք է բերել 2 հազվագյուտ հրատարակություն՝ Եփրեմ Ասորու «Գիրք աղօթից»-ն ու հայատառ թուրքերեն Աստվածաշունչը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 7 +14 + 18
Կոտայքի լեռներ	+3 + 6 +13 + 15
Կոտայքի նախալեռներ	+9 + 11 +17 + 19
Գեղարքունիք	+3 + 8 +11 + 15
Լոռի	+ 3 + 7 +12 + 16
Տավուշ	+ 7 + 13 +15 + 19
Արագածոտնի լեռներ	+ 1 + 5 +12 + 15
Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 11 +17 + 20

Արարատ	+ 9 + 11 +19 + 22
Արմավիր	+ 7 + 10 +19 + 22
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5 +12 + 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 11 +19 + 21
Սյունիքի հովիտներ	+ 7 + 12 +18 + 23
Սյունիքի նախալեռներ	+ 1 + 5 +15 + 18
ԼՂՀ	+ 2 + 6 +15 + 18
Երեւան	+15 + 18 + 22 + 24

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **18.10.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*